

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ



REPUBLIK OF ARMENIA

ARMAVIR MARZ

MIASNIKYAN MUNICIPALITY

Արմավիրի մարզ գ. Մյասնիկյան
Փող. Մյասնիկյան
Հեռ. (0233) 74-6-73

Armavir marz Miasnikyan village
Str. Miasnikyan
Tel. (0233) 74-6-73

ԹԻՎ 017

„01,, մարտի 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
Ա.ՂԱՀՐԱՍՏԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ուղարկում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյանի գյուղական համայնքի ավագանու „27,,փետրվարի 2012թվականի արտահերթ նիստի որոշումը:

Առդիր „13,, թերթ.

Համայնքի ղեկավար 

Ա. Ղեռոսյան

22 ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ
Նամակ 25 03-12
15 03 2012թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք, Մյասնիկյան 11, հեռ.0233 74 6-73

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

„27„ փետրվարի 2012թվականի թիվ 2 արտահերթ նիստի

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

- 1) Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյանի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի փետրվարի 27-ի թիվ 2 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
- 2) Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (7)

Պարզև	Հովհաննիսյան
Վահրամ	Հովհաննիսյան
Ջիվան	Զոհրաբյան
Ավետիք	Ներսիսյան
Նորիկ	Կակոսյան
Պատվական	Մազմանյան
Աշոտ	Սարգսյան



Ա.ՊԵՏՏՐՈՍՅԱՆ



ՕՐԱԿԱՐԳ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**

- 9) Մյասնիկյան համայնքի 2012 թվականի առևտրի, հանրային սննդի և սպասարկման ոլորտի գործունեության կանոնները սահմանելու մասին.
Ձեկուցող՝ Ա.Պետրոսյան
- 10) Համայնքում երիտասարդական միջոցառում կազմակերպելու համար գումար հատկացնելու մասին.
Ձեկուցող՝ Ա.Պետրոսյան
- 11) Համայնքի բյուջեից դրամական օգնություն հատկացնելու մասին.
Ձեկուցող՝ Ա.Պետրոսյան
- 12) Համայնքի բյուջեից նվիրատվություն հատկացնելու մասին..
Ձեկուցող՝ Ա.Պետրոսյան
- 13) Գյուղապետարանի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերի սահմանման մասին.
Ձեկուցող՝ Ա.Պետրոսյան
- 14) Համայնքի ծառայողական մեքենայի պահպանման նպատակով գումար հատկացնելու մասին.
Ձեկուցող՝ Ա.Պետրոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅԱՄԼԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասիկյան համայնք, Մյասիկյան 11, հեռ.0233 74 6-73

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

„27,, փետրվարի 2012 թվականի N 09-Ն որոշում

**ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՆԴԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒՈՐՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՍՅԱՄԼԻԿՅԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.


- 1) Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասիկյանի գյուղական համայնքի առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության կանոնները՝ համաձայն հավելվածի:
- 2) Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (7)

Պարզև	Հովհաննիսյան
Վահրամ	Հովհաննիսյան
Զիվան	Զոհրաբյան
Ավետիք	Ներսիսյան
Նորիկ	Կակոսյան
Պատվական	Մազմանյան
Աշոտ	Ծարգայան



Ա. Պետրոսյան



**ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒՐՔՏԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոններով կարգավորվում էր Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյանի գյուղական համայնքի (այսուհետ՝ համայնք) տարածքում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայության ոլորտներում իրականացվող գործունեությունը:
2. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայության ոլորտներում իրականացվող գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով, «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոններով:
3. Համայնքի տարածքում սույն կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը:

II. ԱՌԵՎՏՐԻ ՕՐՅԵԿՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

4. Ելնելով տվյալ առևտրի օբյեկտների առանձնահատկություններից՝ առևտրի օբյեկտը պետք է ապահովված լինի օրենքով թույլատրված ապրանքների համար օրենսդրությանը համապատասխան ընդունման, պահպանման և վաճառքի պայմաններն ապահովող սարքավորումներով և առևտրատեխնոլոգիական պարագաներով, այդ թվում՝ օրենքով սահմանված կարգով ստուգաչափված կշեռքներով, կշռաքարերով և չափման այլ համապատասխան թույլատրելի միջոցներով, պահեստային, վարչակենցաղային, ապրանքների վաճառքի նախապատրաստման համար անհրաժեշտ տարածքներով:

III. ԱՌԵՎՏՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

5. Մպառողի (գնորդի) կողմից գնված պատշաճ և ոչ պատշաճ ապրանքների փոխարինում և կամ դրանց դիմաց վճարի վերադարձումը և վերահսկումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
6. Համայնքի տարածքում դեղերի վաճառքն իրականացվում է դեղատների միջոցով: Գնորդին վաճառված պատշաճ որակի դեղերը ենթակա չեն վերադարձման:
7. Վաճառողի կողմից սննդամթերքի կշռափաթեթավորում կատարելիս, ելնելով տվյալ ապրանքատեսակի առանձնահատկություններից, փաթեթավորման համար օգտագործվում

են հիգենիկ և հակահամաճարակային նյութերից պատրաստված փաթեթավորման միջոցներ: Փաթեթավորվող սննդամթերքի փաթեթի կամ մեջղիր պիտակների վրա նշվում է ապրանքի անվանումը, տեսակը, քաշը, մեկ կիլոգրամի արժեքը և կշռափաթեթավորված քաշի վաճառքի գինը, փաթեթավորման օրը, նաև պիտանիության ժամկետը:

8. Հացի և հացաբուլկեղենի մանրածախ առևտուրն իրականացվում է հացի և հացաբուլկեղենի մասնագիտացված խանութներում, առանձնացված տաղավարներում և կրպակներում, սննդամթերքի մասնագիտացված խանութների առանձնացված բաժիններում, սպառողական ապրանքների և գյուղատնտեսական ապրանքների շուկաների տարածքում գտնվող առանձնացված առևտրի օբյեկտներում, իսկ մանր կշռափաթեթավորման հատային ապրանքները՝ նաև շրջիկ առևտրի կետերի միջոցով:
9. Հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկ գազի, սեղմված բնական գազի մանրածախ առևտուրը կազմակերպվում է մշտական (ստացիոնար) կայանների միջոցով՝ օրենքով սահմանված կարգով, այդ նպատակի համար հատկացված տեղերում:

IV. ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆԱԴԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

10. Հանրային սնունդը՝ խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և սպառման կազմակերպումն է հատուկ կահավորված տարածքում:
11. Հանրային սննդով զբաղվող առևտուրն իրականացնողը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, իր հիմնադիր փաստաթղթերով և սույն կանոններով:
12. Սպառողների սպասարկման ձևերն ու մեթոդները սահմանում է վաճառողը:
13. Մատուցողի ներկայացված հաշվառում (երկրորդ օրինակը սահմանված կարգով մնում է վաճառողի մոտ) նշվում է նրա ազգանունը, սպասարկման օրը, կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի, հացաբուլկեղենի, զնովի ապրանքների անվանումները, քանակը, զանգվածը և վճարման ենթակա ապրանքների վերջնական գինը:

V. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

14. Կենցաղային ծառայությունը կատարողի և սպառողի անմիջական համագործակցության, ինչպես նաև սպառողների կենցաղային պայմանների բավարարման համ կատարողի սեփական գործունեության արդյունքն է սպառողի հետ անմիջական շփման ընթացքում:
15. Կատարողի մուտքի մոտ փակցվում է ցուցանակ, որտեղ նշվում են ձեռնարկության անվանումը, կազմակերպական - իրավական տեսակը, իրավաբանական հասցեն, հեռախոսը աշխատանքային ռեժիմը:
16. Կատարողի պատվերների ընդունման տեղում փակցվում է գրանցման վկայականի պատճենը, սույն կանոնները, ծառայությունների գնացուցակը, առանձին դեպքերում նաև բժշկական զննության անձնական գրքույկը:
17. Ծառայությունների մատուցման պատվերները ձևակերպվում են պայմանագրով (անդորրագրով):
18. Կենցաղային ծառայության օբյեկտներում ծառայությունների պատվերների ընդունման տեղը և ձևը որոշում է կատարողը:

Սույն կանոնները չեն տարածվում բնակչությանը կամ կատարողին մատուցվող այն ծառայությունների վրա, որոնց կանոնները հաստատում են պետական կառավարման համապատասխան լիազոր մարմինները իրենց իրավասության սահմաններում: Սույն կանոնների խախտումն առաջացնում է պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՅԱՄՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասիկյան համայնք, Մյասիկյան 11, հեռ.0233 74 6-73

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

„27„փետրվարի 2012 թվականի N 10 որոշում

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին.

- 1) Համայնքի բյուջեից 100,0 հազար դրամ գումար հատկացնել համայնքում մարտի 8-ի կապակցությամբ երիտասարդական միջոցառում անցկացնելու համար:
- 2) Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (7)

Պարզև	Հովհաննիսյան	
Վահրամ	Հովհաննիսյան	
Զիվան	Զոհրաբյան	
Ավետիք	Ներսիսյան	
Նորիկ	Կակոսյան	
Պատվական	Մազմանյան	
Աշոտ	Աարգայան	



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅԱՄՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք, Մյասնիկյան 11, հեռ.0233 74 6-73

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

„27„փետրվարի 2012 թվականի N 11 որոշում

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին.

- 1) Համայնքի բյուջեից 180,0 հազար դրամ գումար տրամադրել թվով հինգ սոցիալապես անապահով ընտանիքների, որպես դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:
- 2) Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:


Կողմ (7)

Պարզն	Հովհաննիսյան
Վահրամ	Հովհաննիսյան
Զիվան	Զոհրաբյան
Ավետիք	Ներսիսյան
Նորիկ	Կակոսյան
Պատվական	Մազմանյան
Աշոտ	Սարգսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ



ՑՈՒՑԱԿ

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1.Գասպարյան	Հոփսիմե	80000 դրամ
2.Արտաշյան	Մհեր	30000 դրամ
3.Թադևոսյան	Լուսինկ	30000 դրամ
4.Խաչատրյան	Ալինա	20000 դրամ
5.Զոհրաբյան	Նոյեմ	20000 դրամ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք, Մյասնիկյան 11, հեռ.0233 74 6-73

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

„27„փետրվարի 2012 թվականի N 12 որոշում

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

- 1) Համայնքի բյուջեից 400,0 հազար դրամ հատկացնել «Երիտասարդական նախաձեռնություններ կենտրոնին»՝ որպես նվիրատվություն:
- 2) Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (7)

Պարզև	Հովհաննիսյան
Վահրամ	Հովհաննիսյան
Ջիվան	Զոհրաբյան
Ավետիք	Ներսիսյան
Նորիկ	Կակոսյան
Պատվական	Մազմանյան
Աշոտ	Սարգսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅԱՄՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասիկյան համայնք, Մյասիկյան 11, հեռ.0233 74 6-73

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

„27,, փետրվարի 2012 թվականի N 13-Ն որոշում

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՍՅԱՄՆԻԿՅԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՅ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԻՄԱՅ ԳԱԼՉՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

- 1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասիկյանի գյուղական համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
- 2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (7)

Պարզև	Հովհաննիսյան
Վահրամ	Հովհաննիսյան
Զիվան	Զոհրաբյան
Ավետիք	Ներսիսյան
Նորիկ	Կակոսյան
Պատվական	Մազմանյան
Աշոտ	Սարգսյան



Կ.Տ.
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 Թ-Ի ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԻՄԱՅ ԳԱՆՉՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ**

1. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար սահմանել 5000 դրամ.
 2. Համայնքի բնակիչներին լիազորագիր, երաշխավորագիր, բնութագիր տրամադրելու համար սահմանել 2000 դրամ.
 3. Համայնքի ենթակայության՝ «Մյասնիկյանի մանկապարտեզ» ՀՈԱԿ, «Երաժշտական դպրոց» ոչ առևտրային կազմակերպություններ հաճախող երեխաների ծնող գումար սահմանել 3000 դրամ.
- 1) Միակողմանի ծնողագուրկ և գոհվածի ընտանիքների երեխաների համար անվճար.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՅԱՄՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասիկյան համայնք, Մյասիկյան 11, հեռ.0233 74 6-73

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

„27„փետրվարի 2012 թվականի N 14 որոշում

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

- 1.Համայնքի բյուջեից 250,0 հազար դրամ գումար հատկացնել ծառայողական մեքենայի ընթացիկ նորոգման և պահպանման համար:
- 2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (7)

Պարզև	Հովհաննիսյան
Վահրամ	Հովհաննիսյան
Զիվան	Զոհրաբյան
Ավետիք	Ներսիսյան
Նորիկ	Կակոսյան
Պատվական	Մազմանյան
Աշոտ	Սարգսյան



Կ.Տ. Համայնքի ղեկավար՝

Ա.Պետրոսյան